# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Տրված է կարճ ժամանակով ազատազրկման մեջ գտնվող անձին

**Ահաբեկչություն**

**(հոդված 63-1, 706-73 եւ 706-88 քրեական դատավարության օրենսգրքի)**

**Ստորև տեղեկատվությունը պետք է տրվի ձեզ այն լեզվով, որը դուք հասկանում եք:**

***Կարճ ժամանակով ազատազրկման մեջ գտնվելու ամբողջ տևողության ընթացքում դուք կարող եք պահպանել այս փաստաթուղթը***

Դուք տեղեկացվում էք, որ տեղադրվել եք կարճ ժամանակով (կամ նախնական) ազատազրկման մեջ, քանի որ մեկ կամ ավելի հավանական պատճառներով կասկածվում եք նրանում, որ կատարել եք կամ փորձել էք կատարել ահաբեկչություն հանդիսացող հանցագործություն:

Դուք կհարցաքննվեք այդ փաստերի մասին քսանչորս ժամ տևողությամբ կալանքի (կարճ ժամանակով ազատազրկման) ընթացքում:

Դուք իրավունք ունեք իմանալ ենթադրյալ հանցագործության կատարման անունը, ամսաթիվը եւ տեղը, որի համար ենթարկվել եք հետաքննության և ձեզ կարճ ժամանակով ազատազրկման դրման պատճառները:

Այդ ժամանակահատվածի վերջում, հանրապետության դատախազը կամ քննչական դատավորը, կարող է որոշել կարճ ժամանակով ազատազրկման ժամկետի նորից քսանչորս ժամով երկարաձգում: Եթե այլապես անհնարին է, անհրաժեշտության դեպքում դուք կներկայացվեք այդ դատավորին վիդեոկոնֆերանսի միջոցով:

Բացառիկ դեպքերում, ու եթե անհրաժեշտ է հետաքննության կամ նախաքննության համար, ազատությունների ու կալանքի դատավորի - հանրապետության դատախազի խնդրանքով, կամ քննչական դատավորի կողմից կարող է որոշվել ժամկետի երկու լրացուցիչ երկարաձգում, յուրաքանչյուրը քսանչորս ժամով:

Սակայն, եթե մնացյալ հետախուզության ենթադրյալ տևողությունը առաջին քառասունութ ժամից հետո արդարացվում է, ազատությունների ու կալանքի դատավորի - հանրապետության դատախազի խնդրանքով, կամ հետաքննության դատավորի կողմից կարող է որոշվել, որ (կարճ ժամանակով) ազատազրկումը կերկարաձգվի միայն մի անգամ` քառասունութ ժամ տևողությամբ:

Վերջապես, եթե առաջին տարրերի հետազոտումից կամ հենց նախնական կալանքից պարզվում է, որ Ֆրանսիայում կամ արտերկրում ահաբեկչական հարձակման անմիջական լուրջ

սպառնացող վտանգ կա, կամ եթե միջազգային համագործակցություն պարտադիր կարիքները կամ պահանջները դրդում են, ապա ազատությունների եւ կալանավորման դատավորը կարող է լիազորել, գրավոր և պատճառաբանված որոշմամբ, հանրապետության դատախազի խնդրանքով կամ քննչական դատավորի որոշմամբ և բացառիկ դեպքերում, որ ընթացքի մեջ գտնվող նախնական կալանքը երկարացվի ևս քսանչորս ժամով, որը նույնպես մի վերջին անգամ կարող է նորացվել.

Այդ կարճ ժամանակով ազատազրկումից հետո, դուք հանրապետության դատախազի կամ քննչական դատավորի որոշմամբ կամ կներկայացվեք այդ դատավորին, կամ ազատ կարձակվեք: Առաջին դեպքում, դուք կներկայանաք դատավորի առաջ, ամենաուշը 20 ժամվա ընթացքում, ձեր կարճ ժամանակով ազատազրկման ժամկետի վերջից սկսած, բացառությամբ այն դեպքի, եթե ձեր կարճ ժամանակով ազատազրկումը տևել է 72 ժամից ավելի:

## ԲԱՑԻ ԱՅԴ ՁԵԶ ՏԵՂԵԿԱՑՐԵԼ ԵՆ, ՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ.

### **Որոշ մարդկանց տեղյակ պահելու մասին**

Դուք կարող եք խնդրել հեռախոսով տեղեկացնելու այն մարդուն, ում հետ սովորաբար ապրում եք, կամ ձեր ուղղակի հարազատներից մեկին, կամ ձեր եղբայրներից ու քույրերից մեկին, ձեր հոգաբարձուին կամ խնամակալին, թե ինչքան ժամանակով եք կալանքի տակ գտնվելու:

Բացի այդ, դուք կարող եք այդ մասին ասել ձեր գործատուին:

Եթե դուք օտարերկրի քաղաքացի եք, դուք կարող եք բացի այդ տեղեկացնել ձեր երկրի հյուպատոսական իշխանություններին:

Հանրապետության դատախազը (կամ քննչական դատավորը) կարող է այնուամենայնիվ առարկել այդ խնդրանքին՝ հետաքննության կարիքներից դրդված:

Եթե չլինեն անհաղթահարելի հանգամանքներ, այդ պահանջները կդրվեն ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում, այն պահից սկսած, երբ դուք ներկայացրած կլինեք ձեր դիմում-խնդրանքը:

: Եթե ձեր խնդրանքին դրական պատասխան չի տրվել ձեր ազգականներից մեկին տեղեկացնելու հարցում, ու ենթադրելով, որ ձեր նախնական կալանքը, որի օբյեկտն էք համդիսանում, երկարաձգվել է իննսունվեցերորդ ժամից անց, դուք կարող եք կրկնել ձեր հարցում-խնդրանքը իննսունվեցերորդ ժամից հետո սկսած. Հանրապետության դատախազը կամ քննչական դատավորը կարող է, սակայն նորից առարկել այդ խնդրանքին, հետաքննության կարիքներից դրդված:

### **Բժշկական կոնսուլտացիա անցնելու մասին**

Դուք կարող եք դիմել բժշկական քննություն անցնելու նախնական ազատազրկման պահի հենց սկզբից և եթե այն երկարացված է: Յուրաքանչյուր լրացուցիչ երկարաձգման

ընթացքում, որոնք հավանաբար կորոշվեն, դուք անպայման կքննվեք բժշկի կողմից, ու ձեզ կտեղեկացնեն մի նոր բժշկական քննություն անցնելու խնդրանքի ձեր իրավունքի մասին:

**Հայտարարություններանելու, հարցերին պատասխանելու կամ լռություն պահելու մասին**

Երբ որ դուք հայտարարեք ձեր անուն-ազգանունը, դուք իրավունք կունենաք լսումների ժամանակ.
-հայտարարություններանել
-պատասխանել ձեզ տրվող հարցե
-կամ պահպանել լռություն

**Իրավաբանի հետ հաղորդակցումը**

**-Իրավաբանի ընտրությունը.**

Նախնական ազատազրկման սկզբից սկսած, դուք կարող եք խնդրել, որ ձեզ աջակցի ձեր ընտրած իրավաբանը: Եթե դուք ի վիճակի չէք ընտրել իրավաբանի կամ էլ եթե իրավաբանի հետ անհնար է կապվել, դուք կարող եք խնդրել, որ որևէ իրավաբան ձեր հետ կապվի ավտոմատ կերպով:

Ձեր փաստաբանը կարող է նշանակվել նաև այն մարդկանցից որևէ մեկի կողմից, որին դուք տեղեկացրել եք. այդ դեպքում, դուք պետք է հաստատեք այդ ընտրությունը:

**-Իրավաբանի օգնություն.**

Իրավաբանը կարող է նշանակվել.
- զրուցել ձեզ հետ 30 րոպե: Նախնական կալանքի երկարաձգման դեպքում, դուք կարող եք կրկին խնդրել նրա հետ կրկին խորհրդակցել՝ երկարաձգման հենց սկզբից:
- ու եթե դուք խնդրեք, նա կարող է նաև ներկա գտնվել ձեր լսումներին և հարցաքննություններին:

**-Գործողության վերջնաժամկետը:**

-Հաշվի առնելովհետաքննության անհրաժեշտ հանգամանքները, որոնք պահանջում են ձեզ անմիջապես լսել, հանրապետության դատախազը կարող է թույլատրել, գրավոր կերպով ու փաստարկներով, որ ձեր լսումը սկսվի անմիջապես առանց սպասելու ձեր իրավաբանի ներկայանալու համար նախատեսված երկու ժամ վերջնաժամկետի ավարտին:
-Ձեր իրավաբանի միջամտությունը կարող է հետաձգվել, առավելագույնը 72 ժամ տևողությամբ, անկանխատեսելի պատճառներից ելնելով:

**Թարգմանչի աջակցությունը**

Եթե դուք չեք խոսում կամ հասկանում ֆրանսերենը, դուք իրավունք ունեք օգտվել թարգմանչի անվճար օգնությունից՝ ձեր լսումների եւ ձեր փաստաբանի հետ շփվելու նպատակով.

**Նախնական կալանքի դադարեցման խնդրանքը**

Դուք կարող եք խնդրել հանրապետության դատախազին, քննչական դատավորին կամ ազատությունների եւ կալանքի դատավորին, երբ այս դատավորը կխոսի հնարավոր երկարաձգման կալանքի մասին, որ վերջինս չերկարաձգվի:

**Ձերգործի որոշ հատվածների մատչելիության մասին**

Ձեր կամ ձեր իրավաբանի խնդրանքով, դուք կարող եք խնդրել տեսնելու, ամենաուշը մինչև նախնական կալանքի հավանական երկարաձգման.

- ձերկալանքի տակ դրման արձանագրությունը.
- բժշկական կոնսուլտացիայի վկայագրերը.
- ձեր լսումների արձանագրությունը կամ արձանագրությունները.